Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
հոկտեմբերի 15-ի N 1233 - Ն որոշման

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՄՆԱԿՑԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆԱԽԱՌԱԿԱՎՈՐՄԱՆ (ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ) ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1233-Ն որոշման 1-ին կետով սահմանված գնման ընթացակարգի մասնակցին ներկայացվող նախառակավորման (որակավորման) պահանջները սահմանվում են՝ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 883-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթներով:

2. Գնման ընթացակարգի մասնակցին ներկայացվող նախառակավորման (որակավորման) պահանջներն են՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությունը.

ա. մրցույթին մասնակցության հրավերի օրվան նախորդող 15 տարվա ընթացքում պետք է անձամբ (այդ թվում՝ որպես կոնսորցիումի անդամ) կամ իր դուստր կամ 50 և ավելի տոկոս մասնակցությամբ ընկերության (այդ թվում՝ որպես կոնսորցիումի անդամ) միջոցով իրականացրած լինի ջրային համակարգերի կառավարման, շահագործման և պահպանման՝ առնվազն 5 տարի տևողությամբ՝ տարեկան առնվազն 600,000 բնակչի սպասարկում ապահովող ջրամատակարարման մեկ ծրագիր, կամ ընդհանուր թվով առնվազն 800,000 բնակչի սպասարկում ապահովող մեկից ավելի ջրամատակարարման ծրագրեր (ընդ որում, նշված ծրագրերից առնվազն մեկը պետք է ապահովի ավելի քան 300,000 բնակչի սպասարկում),

բ. վերջին 15 տարվա ընթացքում պետք է անձամբ (այդ թվում՝ որպես կոնսորցիումի անդամ) կամ իր դուստր կամ 50 և ավելի տոկոս մասնակցությամբ ընկերության (այդ թվում՝ որպես կոնսորցիումի անդամ) միջոցով իրականացրած լինի առնվազն երեք տարբեր երկրներում բնակչության սպասարկում ապահովող ջրային համակարգերի կառավարման, շահագործման և պահպանման ծրագիր.

2) մասնագիտական փորձառություն.

ա. վերջին 15 տարվա ընթացքում պետք է անձամբ (այդ թվում՝ որպես կոնսորցիումի անդամ) կամ իր դուստր կամ 50 և ավելի տոկոս մասնակցությամբ ընկերության (այդ թվում՝ որպես կոնսորցիումի անդամ) միջոցով իրականացրած լինի ջրային համակարգերի վերանորոգման ու վերականգնման աշխատանքներ՝ առնվազն երեք ծրագրի համար, յուրաքանչյուրը՝ 5,000,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք գումարից ոչ պակաս,

բ. Հայաստանի Հանրապետության տարածքում հրավերի օրվան նախորդող 15 տարվա ընթացքում պետք է անձամբ (այդ թվում՝ որպես կոնսորցիումի անդամ) կամ իր դուստր կամ 50 և ավելի տոկոս մասնակցությամբ ընկերության (այդ թվում՝ որպես կոնսորցիումի անդամ) միջոցով ունենա առնվազն 100,000 բնակչի սպասարկում ապահովող ջրային համակարգերի կառավարման, շահագործման և պահպանման՝ առնվազն 5 տարի տևողությամբ մեկ ծրագիր.

3) ֆինանսական միջոցներ. վերջին 5 տարվա ընթացքում անձամբ (այդ թվում՝ որպես կոնսորցիումի անդամ) կամ իր դուստր կամ 50 և ավելի տոկոս մասնակցությամբ ընկերության (այդ թվում՝ որպես կոնսորցիումի անդամ) միջոցով ջրային համակարգերի կառավարման, շահագործման և պահպանման ոլորտում շրջանառություն՝ տարեկան միջինը 50 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք գումարի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ